«ԵՐԵՎԱՆԻ ՊԱՀԱԾՈՆԵՐԻ ԳՈՐԾԱՐԱՆ» ՓԲԸ-ՈՒՄ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 14-ԻՆ ՏԵՂԻ ՈՒՆԵՑԱԾ ՊԱՅԹՅՈՒՆԻ ՀԵՏԵՎԱՆՔՈՎ ԶՈՀԵՐԻ (ԱՅԴ ԹՎՈՒՄ ԳՏՆՎԵԼՈՒ ՎԱՅՐԸ ԱՆՀԱՅՏ ԱՆՁԻ) ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻՆ ԵՎ ՎԻՐԱՎՈՐՈՒՄ (ԽԵՂՈՒՄ, ՎՆԱՍՎԱԾՔ) ՍՏԱՑԱԾ ԱՆՁԱՆՑ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄԸ ԵՎ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԻԾ

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

սեպտեմբերի 2022 թվականի N - Լ

«ԵՐԵՎԱՆԻ ՊԱՀԱԾՈՆԵՐԻ ԳՈՐԾԱՐԱՆ» ՓԲԸ-ՈՒՄ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 14-ԻՆ ՏԵՂԻ ՈՒՆԵՑԱԾ ՊԱՅԹՅՈՒՆԻ ՀԵՏԵՎԱՆՔՈՎ ԶՈՀԵՐԻ (ԱՅԴ ԹՎՈՒՄ ԳՏՆՎԵԼՈՒ ՎԱՅՐԸ ԱՆՀԱՅՏ ԱՆՁԻ) ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻՆ ԵՎ ՎԻՐԱՎՈՐՈՒՄ (ԽԵՂՈՒՄ, ՎՆԱՍՎԱԾՔ) ՍՏԱՑԱԾ ԱՆՁԱՆՑ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄԸ ԵՎ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 83-րդ հոդվածը և 146-րդ հոդվածի 4-րդ մասը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը որոշում է.

1. Հաստատել «Երևանի պահածոների գործարան» ՓԲԸ-ում 2022 թվականի օգոստոսի 14-ին տեղի ունեցած պայթյունի հետևանքով զոհերի (այդ թվում գտնվելու վայրը անհայտ անձի) ընտանիքներին և **վիրավորում (խեղում, վնասվածք)** ստացած անձանց սոցիալական աջակցության միջոցառումը և տրամադրման կարգը՝ համաձայն NN 1 և 2 հավելվածների։
2. Հայաստանի Հանարպետության առողջապահության նախարարին՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո հնգօրյա ժամկետում Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությանը տրամադրել «Երևանի պահածոների գործարան» ՓԲԸ-ում 2022 թվականի օգոստոսի 14-ին տեղի ունեցած պայթյունի հետևանքով **վիրավորում (խեղում, վնասվածք)** ստացած և հիվանդանոցային պայմաններում բուժման մեջ գտնված անձանց վերաբերյալ տվյալները (անունը, ազգանունը, հայրանունը, ծննդյան օրը, ամիսը, տարեթիվը, հիվանդանոցային պայմաններում բուժման մեջ գտնվելու օրերի թիվը, անձը հաստատող փաստաթղթի տվյալները

և/կամ հանրային ծառայությունների համարանիշը):

3. Առաջարկել Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի նախագահին՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո հնգօրյա ժամկետում Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությանը տրամադրել «Երևանի պահածոների գործարան» ՓԲԸ-ում 2022 թվականի օգոստոսի 14-ին տեղի ունեցած պայթյունի հետևանքով զոհերի (այդ թվում գտնվելու վայրը անհայտ անձի) և առկայության դեպքում՝ զոհերի (այդ թվում գտնվելու վայրը անհայտ անձի) ընտանիքների անդամների վերաբերյալ տվյալները (անունը, ազգանունը, հայրանունը, ծննդյան օրը, ամիսը, տարեթիվը, անձը հաստատող փաստաթղթի տվյալները և/կամ հանրային ծառայությունների համարանիշը):
4. Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարին՝ սույն որոշումն ընդունվելուց հետո տասնօրյա ժամկետում Հայաստանի Հանրապետության կառավարություն ներկայացնել առաջարկություն սույն որոշմամբ նախատեսված սոցիալական աջակցության տրամադրման ֆինանսավորման նպատակով Հայաստանի Հանրապետության 2022 թվականի պետական բյուջեում վերաբաշխում կատարելու վերաբերյալ:

Հավելված N 1

ՀՀ կառավարության 2022 թվականի

սեպտեմբերի -ի N - Լ որոշման

«ԵՐԵՎԱՆԻ ՊԱՀԱԾՈՆԵՐԻ ԳՈՐԾԱՐԱՆ» ՓԲԸ-ՈՒՄ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 14-ԻՆ ՏԵՂԻ ՈՒՆԵՑԱԾ ՊԱՅԹՅՈՒՆԻ ՀԵՏԵՎԱՆՔՈՎ ԶՈՀԵՐԻ (ԱՅԴ ԹՎՈՒՄ ԳՏՆՎԵԼՈՒ ՎԱՅՐԸ ԱՆՀԱՅՏ ԱՆՁԻ) ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻՆ ԵՎ ՎԻՐԱՎՈՐՈՒՄ (ԽԵՂՈՒՄ, ՎՆԱՍՎԱԾՔ) ՍՏԱՑԱԾ ԱՆՁԱՆՑ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄԸ

1. Միջոցառման նպատակն է սոցիալական աջակցություն տրամադրել « Երևանի պահածոների գործարան» ՓԲԸ-ում 2022 թվականի օգոստոսի 14-ին տեղի ունեցած պայթյունի հետևանքով զոհերի (այդ թվում գտնվելու վայրը անհայտ անձի) ընտանիքներին և **վիրավորում (խեղում, վնասվածք)** ստացած անձանց:
2. Սոցիալական աջակցությունը տրամադրվում է միանվագ դրամական օգնության ձևով՝

1) **վիրավորում (խեղում, վնասվածք)** ստանալու դեպքում՝

ա. հիվանդանոցային պայմաններում մինչև երեք օր բուժման մեջ գտնված անձանց դեպքում՝ 150.000 դրամի չափով.

բ. հիվանդանոցային պայմաններում երեք և ավելի օր բուժման մեջ գտնված անձանց դեպքում՝ 300.000 դրամի չափով.

2) զոհված (այդ թվում գտնվելու վայրը անհայտ անձի) անձանց ընտանիքների դեպքում՝ յուրաքանչյուր զոհվածի (այդ թվում գտնվելու վայրը անհայտ անձի)

համար՝ 3.000.000 դրամի չափով։

3. Սույն միջոցառման շրջանակում ընտանիքի անդամներ են համարվում՝

1) ամուսինը.

2) զավակը (զավակները).

3) ծնողը (ծնողները) կամ օրինական ներկայացուցիչը.

4) 2022 թվականի օգոստոսի 14-ի դրությամբ 18 տարին չլրացած կամ անգործունակ ճանաչված կամ մինչև 23 տարեկան առկա ցերեկային ուսուցմամբ սովորող ուսանող քույրը և եղբայրը, ինչպես նաև զոհվածի (այդ թվում գտնվելու վայրը անհայտ անձի) խնամքի տակ գտնված 18 տարեկան և դրանից բարձր տարիքի հաշմանդամ քույրը և եղբայրը, եթե հաշմանդամ են ճանաչվել մինչև 18 տարին լրանալը: Ընդ որում, քույրը և եղբայրը սոցիալական աջակցության իրավունքից կարող են օգտվել, եթե նրանց ծնողները կամ միակ ծնողը մահացած են կամ ունեն աշխատանքային գործունեությամբ զբաղվելու կարողության առնվազն երրորդ աստիճանի սահմանափակում:

4. Սույն միջոցառումից օգտվելու համար դիմումը պետք է ներկայացվի Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության միասնական սոցիալական ծառայություն էլեկտրոնային եղանակով՝ մինչև 2022 թվականի դեկտեմբերի 1-ը:
5. Սոցիալական աջակցությունը տրամադրվում է համապատասխան գումարը բանկային հաշվեհամարին կամ շահառուի ընտրված բանկին փոխանցելու միջոցով:

Հավելված N 2

ՀՀ կառավարության 2022 թվականի

սեպտեմբերի -ի N - Լ որոշման

Կ Ա Ր Գ

«ԵՐԵՎԱՆԻ ՊԱՀԱԾՈՆԵՐԻ ԳՈՐԾԱՐԱՆ» ՓԲԸ-ՈՒՄ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 14-ԻՆ ՏԵՂԻ ՈՒՆԵՑԱԾ ՊԱՅԹՅՈՒՆԻ ՀԵՏԵՎԱՆՔՈՎ ԶՈՀԵՐԻ (ԱՅԴ ԹՎՈՒՄ ԳՏՆՎԵԼՈՒ ՎԱՅՐԸ ԱՆՀԱՅՏ ԱՆՁԻ) ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻՆ ԵՎ ՎԻՐԱՎՈՐՈՒՄ (ԽԵՂՈՒՄ, ՎՆԱՍՎԱԾՔ) ՍՏԱՑԱԾ ԱՆՁԱՆՑ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ

1. Սույն կարգով կարգավորվում են «Երևանի պահածոների գործարան» ՓԲԸ-ում 2022 թվականի օգոստոսի 14-ին տեղի ունեցած պայթյունի հետևանքով զոհերի (այդ թվում գտնվելու վայրը անհայտ անձի) ընտանիքներին և **վիրավորում (խեղում, վնասվածք)** ստացած անձանց (այսուհետ՝ շահառու) սոցիալական աջակցության (այսուհետ՝

աջակցություն) տրամադրման (նշանակելու և վճարելու) հետ կապված հարաբերությունները:

2. Աջակցությունը տրամադրում (նշանակում և վճարում) է Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության միասնական սոցիալական ծառայությունը (այսուհետ՝ Ծառայություն)՝ շահառուի կողմից էլեկտրոնային եղանակով ներկայացվող դիմումի հիման վրա:
3. Դիմումը ներկայացնելու համար շահառուն, մինչև 2022 թվականի դեկտեմբերի 1-ը, Ծառայություն է ներկայացնում (այդ թվում նաև՝e-request.am էլեկտրոնային հարցումների միասնական հարթակի միջոցով)

1) **վիրավորում (խեղում, վնասվածք)** ստացած անձանց դեպքում՝

ա. եթե դիմումը ներկայացնելու պահին շահառուն չափահաս է, ապա շահառուի անունը, ազգանունը, անձը հաստատող փաստաթղթի սերիան ու համարը (կամ նույնականացման քարտի համարը),

բ. եթե դիմումը ներկայացնելու պահին շահառուն անչափահաս է, ապա օրինական ներկայացուցչի անունը, ազգանունը, անձը հաստատող փաստաթղթի սերիան ու համարը (կամ նույնականացման քարտի համարը), երեխայի անձը հաստատող փաստաթղթի սերիան ու համարը, ծննդյան վկայականի լուսապատճենը,

գ. շահառուի (սույն ենթակետի «բ» պարբերությունում նշված դեպքում՝ օրինական ներկայացուցչի) էլեկտրոնային փոստի հասցեն, բջջային հեռախոսահամարը և բանկային հաշվեհամարը կամ բանկը.

2) զոհված անձանց (այդ թվում գտնվելու վայրը անհայտ անձի) ընտանիքների դեպքում՝

ա. շահառուի անունը, ազգանունը, անձը հաստատող փաստաթղթի սերիան ու համարը (կամ նույնականացման քարտի համարը), էլեկտրոնային փոստի հասցեն, բջջային հեռախոսահամարը, բանկային հաշվեհամարը կամ բանկը, զոհվածի մահվան վկայականի կամ մահվան ակտի գրանցման վերաբերյալ տեղեկանքը,

բ. ամուսնության վկայականի կամ ամուսնության ակտի գրանցման վերաբերյալ տեղեկանքի էլեկտրոնային լուսապատճենը՝ զոհվածի (այդ թվում գտնվելու վայրը անհայտ անձի) ամուսնու համար,

գ. զոհվածի (այդ թվում գտնվելու վայրը անհայտ անձի) ծննդյան վկայականի կամ ծննդյան ակտի գրանցման վերաբերյալ տեղեկանքի էլեկտրոնային լուսապատճենը՝ զոհվածի (այդ թվում գտնվելու վայրը անհայտ անձի) ծնողի կամ օրինական ներկայացուցչի համար,

դ. երեխայի ծննդյան վկայականի կամ ծննդյան ակտի գրանցման վերաբերյալ տեղեկանքի և առկայության դեպքում՝ երեխայի ծնողների ամուսնության վկայականի (կամ հայրության ճանաչման վկայականի) էլեկտրոնային լուսապատճենը՝ զոհվածի (այդ թվում գտնվելու վայրը անհայտ անձի) երեխայի

համար,

ե. ըստ անհրաժեշտության՝ առկա (ցերեկային) ուսուցմամբ սովորելը հաստատող փաստաթղթի, հաշմանդամ ճանաչելու մասին բժշկասոցիալական փորձաքննական որոշման, ինչպես նաև 18 տարին չլրացած երեխայի օրինական ներկայացուցիչը՝ ծնողը, խնամակալը, որդեգրողը, դատարանի վճռով անգործունակ կամ սահմանափակ գործունակ ճանաչված անձի խնամակալ հանդիսանալը հաստատող փաստաթղթերի էլեկտրոնային լուսապատճենները,

զ. տեղեկատվություն այլ շահառուների (ընտանիքի անդամներ՝ ամուսին, զավակ, ծնող, քույր, եղբայր) առկայության վերաբերյալ՝ համաձայնության դեպքում կցելով նաև զոհվածի (այդ թվում գտնվելու վայրը անհայտ անձի) համար նախատեսված գումարը մեկ շահառուի կողմից ստանալու մասին բոլոր շահառուների կողմից ստորագրված համաձայնագրի էլեկտրոնային լուսապատճենը՝ համաձայն Ձևի։

4. Ծառայությունը, դիմումով ներկայացված տվյալները համեմատում է (համադրում է) Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության (**վիրավորում (խեղում, վնասվածք)** ստացած անձանց դեպքում) և քննչական կոմիտեի (զոհված անձանց (այդ թվում գտնվելու վայրը անհայտ անձի) ընտանիքների դեպքում) կողմից տրամադրված տվյալների հետ, անհրաժեշտության դեպքում, պետական և տեղական ինքնակառավարման մարմինների տեղեկատվական բազաներից հարցումների միջոցով կատարում է դիմումով ներկայացված տվյալների ճշգրտումներ և մերժում է կամ հաշվառում է դիմումը։ Ընդ որում, զոհված անձանց (այդ թվում գտնվելու վայրը անհայտ անձի) ընտանիքների դեպքում, ճշգրտվում է նաև այլ շահառուների առկայության վերաբերյալ տեղեկատվությունը:
5. Դիմումը մերժվում է, եթե՝

1) ներկայացված տվյալները թերի են և դրա մասին Ծառայությունից տեղեկանալուց հետո տաս աշխատանքային օրվա ընթացքում չեն լրացվել.

2) ներկայացված տվյալները հավաստի չեն (Ծառայության իրականացրած ուսումնասիրության արդյունքում).

3) դիմումը ներկայացնելու պահին քաղաքացիական կացության ակտերի գրանցման մարմիններից ստացված տվյալների համաձայն՝ առկա է շահառուի մահվան պետական գրանցում: Այս դեպքում, զոհված անձանց (այդ թվում գտնվելու վայրը անհայտ անձի) ընտանիքների այլ անդամի առկայության դեպքում, վերջիններս աջակցությունից օգտվելու համար դիմում են սույն կարգի 3-րդ կետի 2-րդ ենթակետով սահմանված կարգով.

4) զոհված անձանց (այդ թվում գտնվելու վայրը անհայտ անձի) ընտանիքների դեպքում՝ ուսումնասիրության արդյունքում չի հաստատվել սույն որաշման N 1 հավելվածի 3-րդ կետով սահմանված՝ ընտանիքի անդամ լինելու հանգամանքը.

5) շահառուի համար առկա է հաստատված դիմում, բացառությամբ այն դեպքերի, երբ զոհված անձի (այդ թվում գտնվելու վայրը անհայտ անձի)

ընտանիքի անդամ**ը հանդիսանում է նաև վիրավորում (խեղում, վնասվածք)** ստացած անձ կամ զոհված (այդ թվում գտնվելու վայրը անհայտ) այլ անձի ընտանիքի անդամ։

6. Եթե դիմումը չի մերժվում, ապա Ծառայությունը հաշվառում է դիմումը և հաշվարկում է միանվագ դրամական օգնության չափը՝

1) **վիրավորում (խեղում, վնասվածք)** ստանալու դեպքում՝

ա. հիվանդանոցային պայմաններում մինչև երեք օր բուժման մեջ գտնված անձանց համար՝ 150.000 դրամ.

բ. հիվանդանոցային պայմաններում երեք և ավելի օր բուժման մեջ գտնված անձանց համար՝ 300.000 դրամի չափով.

2) զոհված անձանց (այդ թվում գտնվելու վայրը անհայտ անձի) ընտանիքների դեպքում՝ 3.000.000 դրամ/շահառուների թիվ (գումարը բաժանվում է շահառուների միջև, եթե չկա նախատեսված գումարը մեկ շահառուի կողմից ստանալու մասին համաձայնություն),

3) եթե առկա չէ զոհված անձանց (այդ թվում գտնվելու վայրը անհայտ անձի) ընտանիքների անդամների (շահառուների) վերաբերյալ ճշգրտված տեղեկատվություն, ապա հաշվարկվում է միանվագ դրամական օգնության նախնական չափ՝ 1.000.000 դրամ: 2022 թվականի դեկտեմբերի 1-ի դրությամբ միանվագ դրամական օգնության վերջնական չափի հաշվարկումը կատարվում է համաձայն սույն կետի 2-րդ ենթակետի։

7. Աջակցությունը նշանակելու կամ մերժելու մասին որոշումը Ծառայությունը կայացնում է դիմումն ստանալուց հետո առավելագույնը 30 օրերի ընթացքում, որի մասին գրավոր տեղեկացնում է դիմողին: Ընդ որում, աջակցությունը նշանակելու դեպքում՝ նշվում է նաև հաշվարկված դրամական օգնության չափը։
8. Աջակցությունը վճարվում է անկանխիկ եղանակով՝ դրամական օգնության գումարը՝ դիմումը հաստատելուց հետո հինգ աշխատանքային օրվա ընթացքում դիմողի բանկային հաշվեհամարին փոխանցելու կամ շահառուի՝ ընտրված բանկի մասնաճյուղ անձամբ կամ նոտարական կարգով լիազորված անձի ներկայանալու և վերջինիս նույնականացնելու միջոցով:
9. Աջակցության գումարը չի կարող արգելադրվել (դրվել արգելանքի տակ), բռնագանձվել կամ հաշվանցվել հաճախորդի պարտավորությունների դիմաց։

10. Սույն կարգի հիման վրա նշանակված և շահառուի մահվան պատճառով չվճարված գումարը վճարվում է դիմողի ամուսնուն կամ 14 տարին լրացած երեխային, եթե դիմումը և անհրաժեշտ փաստաթղթերը (դիմողի անձը հաստատող փաստաթուղթը, դիմողի մահվան վկայականը, ազգակցական կապը հաստատող փաստաթուղթ և այլն) Ծառայություն են ներկայացվում մինչև 2022 թվականի դեկտեմբերի 20-ը

Ձև

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

Ես՝_____ս _____

(անուն, հայրանուն, ազգանուն) (անձնագրի սերիանն և համարը կամ նույնականացման քարտի համարը,

_____

ծննդյան օր, ամիս, տարի հաշվառման/բնակության վայր)

հանդիսանալով զոհ(գտնվելու վայրը անհայտ անձի)_____-ի

(անուն, ազգանուն)

(նշել)_____

(հայր, մայր, քույր, եղբայր, զավակ, խնամքի տակ գտնված անձ, 18 տարին չլրացած երեխայի դեպքում՝ նրա օրինական ներկայացուցիչ)

տալիս եմ իմ համաձայնությունը, Երևանի պահածոների գործարան» ՓԲԸ-ում 2022 թվականի օգոստոսի 14-ին տեղի ունեցած պայթյունի հետևանքով զոհերի (այդ թվում գտնվելու վայրը անհայտ անձի) ընտանիքների համար նախատեսված աջակցության գումարը ստանա _____, ով հանդիսանում է զոհվածի

(անուն, ազգանուն)

(գտնվելու վայրը անհայտ անձի)՝ ամուսինը, հայրը, մայրը, քույրը, եղբայրը, զավակը,

(ընդգծել)

օրինական ներկայացուցիչը, խնամքի տակ գտնված անձը:

Ստորագրություն _____ « » 2022թ.

Ծանոթություն՝ միջոցառման շրջանակում ընտանիքի անդամներ են համարվում՝

1) ամուսինը.

2) զավակը (զավակները).

3) ծնողը (ծնողները) կամ օրինական ներկայացուցիչը.

4) 2022 թվականի օգոստոսի 14-ի դրությամբ 18 տարին չլրացած կամ անգործունակ ճանաչված կամ մինչև 23 տարեկան առկա ցերեկային ուսուցմամբ սովորող ուսանող քույրը և եղբայրը, ինչպես նաև զոհվածի (այդ թվում գտնվելու վայրը անհայտ անձի) խնամքի տակ գտնված 18 տարեկան և դրանից բարձր տարիքի հաշմանդամ քույրը և եղբայրը, եթե հաշմանդամ են ճանաչվել մինչև 18 տարին լրանալը: Ընդ որում, քույրը և եղբայրը սոցիալական աջակցության իրավունքից կարող են օգտվել, եթե նրանց ծնողները կամ միակ ծնողը մահացած են կամ ունեն աշխատանքային գործունեությամբ զբաղվելու կարողության առնվազն երրորդ աստիճանի սահմանափակում: